ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Գայանե Աիարոնյանը, Արտակ Անդրեասյանը, Անուշ Ասատրյանը, Գևորգ Բաբայանը, Կարապետ Բադալյանը, Արման Թադեվոսյանը, Կարինե Թովմասյանը, Լուսինե Խաչատրյանը, Հայկ Մելքոնյանը, Կարապետ Մեսրոպյանը, Մելիք Նազարյանը, Էլմիրա Ոսկանյանը, Նաիրա Վանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Վարդան Գաբրիելյան, Կարեն Թադևոսյան, Առաքել Մինասյան, Ծովինար Գալստյան, Արմինա Մելոյան, Հասմիկ Ավետիսյան, Ջորիկ Գրիգորյան, Ալվարդ Դավթյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարդան Գաբրիելյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/*

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. «ԼՈՒՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐՆ, ԱՆՎԱՎՈՐ ՄԻԱՇԵՐՏ ՃԱԿԱՏԱՅԻՆ ՄԻՆԻ ԲԵՌՆԻՉԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ<<ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 308-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆԱՀԻՏ ՎԱԼՈԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՐԵՆ ԹԵԼՄԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՎԱՂԻՆԱԿ ԱՐԱՐԱՏԻ ԵՓՐԵՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ԱՐԹՈՒՐ ԺԻՐԱՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, ԼՈՒՍԻԿ ԱՐԱՐԱՏԻ ԹԱԹՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 334-Ա/

Լսեցին

***<<ԼՈՒՔ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԿԱՐԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 3-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Տրամադրել նախնական համաձայնություն՝ «ԼՈՒՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Ջրահովիտ բնակավայրում կրթահամալիր կառուցելու համար:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 335-Ա/

Լսեցին

***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐՆ, ԱՆՎԱՎՈՐ ՄԻԱՇԵՐՏ ՃԱԿԱՏԱՅԻՆ ՄԻՆԻ ԲԵՌՆԻՉԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ <<ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Մասիսի համայնքապետարանի կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետ Սուրեն Ամիրջանյանի 19.11.2024 թվականի զեկուցագիրը Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի **Մասիս համայնքի ավագանին որոշում է**

1.Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ԿԱՎԶ 32-70 մակնիշի, 053 DF 61 համարանիշի, 1989 թվականի արտադրության ավտոբուսը, MAZ KO-456-10 մակնիշի, 272 DF 61 համարանիշի , 2024 թվականի արտադրության աղբարկղատար ավտոմեքենան /47 000 000 ՀՀ դրամ արժողությամբ/, MAZ KO-456-10 մակնիշի, 273 DF 61 համարանիշի , 2024 թվականի արտադրության աղբարկղատար ավտոմեքենան /47 000 000 ՀՀ դրամ արժողությամբ/,ՎԱԶ 2107 մակնիշի, 700 CG 61 համարանիշի, 2005 թվականի արտադրության ավտոմեքենան, ԱՆՎԱՎՈՐ ՄԻԱՇԵՐՏ ՃԱԿԱՏԱՅԻՆ ՄԻՆԻ ԲԵՌՆԻՉԸ (բոբկաթ) և գյուղատնտեսական գործիքները ՝ հնձիչ КСП /450 000 ՀՀ դրամ արժողությամբ/,հողաֆրեզ 2,4մ / 1 150 000 ՀՀ դրամ արժողությամբ/,

փոցխ կախովի /200000 ՀՀ դրամ արժողությամբ/, գութան /680000 ՀՀ դրամ արժողությամբ/, սրսկման ապարատ / 1 599 100 ՀՀ դրամ արժողությամբ/, խոտհավաք մեքենա /7 500 000 ՀՀ դրամ արժողությամբ/, անօրգանական նյութերի ցրիչ / 219 600 ՀՀ դրամ արժողությամբ/ անժամկետ,անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Մասիս համայնքի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և կանաչապատում>> ՀՈԱԿ-ին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 336-Ա/

Լսեցին

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 308-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԾՈՎԻՆԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 28-րդ կետերի, 28-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ մասի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, ,,Նվազագույն ամսական աշխատավարձի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել համայնքի ղեկավարի վարձատրության չափը, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:
2. Սահմանել և հաստատել հավելավճար.
ա/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ քաղաքական, հայեցողական, վարչական պաշտոններում աշխատած առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ աշխատած ընդհանուր ստաժի յուրաքանչյուր տարվա համար՝ դրույքաչափի 0,6 տոկոսի չափով,
բ/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ համայնքային ծառայության պաշտոններում աշխատած առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ աշխատած ընդհանուր ստաժի յուրաքանչյուր տարվա համար՝

դրույքաչափի 0,6 տոկոսի չափով
գ/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի /ներառյալ միավորված 26 համայնքներում/ տեխնիկական սպասարկման անձնակազմում աշխատած առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանում /ներառյալ միավորված 26 համայնքներում/ աշխատած ընդհանուր ստաժի յուրաքանչյուր տարվա համար՝ դրույքաչափի 0,6 տոկոսի չափով:
3. Ուժը կորցրած ճանաչել 2023 թվականի դեկտեմբերի 15-ի ,,**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 226-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**,, թիվ 308-Ա որոշումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 337-Ա/

Լսեցին
***ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասով, 686-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով <<Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության նախագահ Արմեն Մելիքբեկյանի և ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի միջև 2024 թվականի նոյեմբերի 8-ին կնքված համագործակցության հուշագիրը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թույլատրել մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզի Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող՝ մարզ Արարատ, համայնք Մասիս, Մասիս ք. Երիտասարդական փողոց 2-րդ նրբանցք 2 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 03-003-0298-0836, մակերեսը՝ 3.5676 հա) անհատույց օգտագործման իրավունքով, 25 տարի ժամկետով տրամադրել ,,Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա,, հասարակական կազմակերպությանը :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 338-Ա/

Լսեցին
***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆԱՀԻՏ ՎԱԼՈԴԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Անահիտ Մխիթարյանի դիմումը /մտից՝ 13.12.2023թ. թիվ 17012/, Մասիսի քաղաքապետի և քաղաքացի Անահիտ Մխիթարյանի միջև 23.09.2005թ, թվականին կնքված վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Մասիս քաղաքի 03-003-0298-0820 ծածկագիրը կրող 0,02032 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Անահիտ Վալոդի Մխիթարյանի կողմից վարձակալած՝ Մասիս համայնքի Մասիս քաղաքում գտնվող 03-003-0298-0820 ծածկագրով 0,02032 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը /վկայական N 09102024-03-0059/, թույլատրել ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում, գնման նախապատվության իրավունքով, տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի 100 %-ով , ընդհանուր 910000 /ինը հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ արժեքով օտարել Անահիտ Վալոդի Մխիթարյանին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 339-Ա/

Լսեցին
***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի

ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքում գտնվող հողամասն օտարել՝ աճուրդ վաճառքի միջոցով.

1) Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, Մասիս համայնք, Մասիս ք. 3-րդ փողոց, 4/1 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0124-0040 կադաստրային ծածկագրով, 0.02317 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ի չափով, 1 քմ- ը 6663 Հայաստանի Հանրապետության դրամ:

Քվեարկության արդյունքով որոշումը չընդունվեց.

Կողմ-0 Դեմ-13 Ձեռնպահ-1

Լսեցին .

***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՐԵՆ ԹԵԼՄԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով Կարեն Հարությունյանի դիմումը /մտից՝ 18.09.2023թ. թիվ 12013/՝ **Հայաստանի Հնարապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Յայաստանի Յանրապետություն Արարատի մարզ Մասիս համայնք Գետափնյա 21-րդ փողոց 91/1 հողամաս հասցեում 0,00113 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-030-0037-0148, սեփականության իրավունքի վկայական N 12092024-03-0103/, որը սահմանակից է Կարեն Թելմանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր՝ 03-030-0037-0060/ հողամասին և որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Կարեն Թելմանի Հաարությունյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 50193 /հիսուն հազար հարյուր իննսուներեք/ Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 340-Ա/

Լսեցին
***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում նշված հողամասը տրամադրել վարձակալության մրցութային կարգով.

<<1>> Մասիս համայնքի Արգավանդ Օդանավակայանի 1-ին փողոց 7/1 հողամաս հասցեում գտնվող 03-018-0006-0033 կադաստրային ծածկագրով, 0.03216 հա բնակավայրերի նպատակային հասարակական կառուցապատման հողամասը /վկայական N 19112024-03-0013/, մրցույթի մեկնարկային գին սահմանել 50000 /հիսուն հազար/Հայաստանի Հանրապետության դրամ,

Քվեարկության արդյունքով որոշումը չընդունվեց.

Կողմ-0 Դեմ-13 Ձեռնպահ-1

Լսեցին
***ՎԱՂԻՆԱԿ ԱՐԱՐԱՏԻ ԵՓՐԵՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ և հաշվի առնելով Վաղինակ Եփրեմյանի հայտը /20.11.2024թ. մտից 15787/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Ղուկասավան բնակավայրում գտնվող Վաղինակ Արարատի Եփրեմյանին սեփականության իրավունքով պատկանող 03-056-0011-0072 կադաստրային ծածկագիրը կրող, 0.24447 հա մակերեսով բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու նպատակով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 341-Ա/

Լսեցին
***ԱՐԹՈՒՐ ԺԻՐԱՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԼՈՒՍԻԿ ԱՐԱՐԱՏԻ ԹԱԹՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ և հաշվի առնելով Լուսիկ Թաթոսյանի դիմումը /25.10.2024թ. մտից 14542/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Այնթապ բնակավայրում գտնվող Արթուր Ժիրայրի Խաչատրյանին, Լուսիկ Արարատի Թաթոսյանին սեփականության իրավունքով պատկանող 03-012-0313-0007 կադաստրային ծածկագիրը կրող, 0.15107 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային, վարելահող հողատեսքի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 342-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՐԵՄ ՇԱԲՈՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԶՈՀՐԱԲ ՕՍԵՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ____________

*Նիստն արձանագրեց՝*

Վարդան Գաբրիելյանը ____________

2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐԱՑՄԱՆ ՑՈՒՑԱԿ

2024 թվականի նոյեմբերի 22-ի արտահերթ նիստ

| Հ/Հ | Ազգանուն | Անուն | Հայրանուն | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | Համբարձումյան | Դավիթ | Միերի | |
| 2 | Հակոբյան | Նորայր | Արեգի | |
| 3 | Եղիազարյան | Արսեն | Գագիկի | |
| 4 | Արամայիսյան | Կարեն | Գագիկի | |
| 5 | Օհաջանյան | Ելիզավետա | Գրիգորիի | |
| 6 | Օսեյան | Զոհրաբ | Հայկի | |
| 7 | Կարապետյան | Կարեն | Բաբկենի | |
| 8 | Մանուկյան | Հովհաննես | Լյովայի | |
| 9 | Ծաբոյան | Երեմ | Մանվելի | |
| 10 | Ավանեսյան | Արթուր | Արկադիի | |
| 11 | Աֆրիկյան | Նունե | Ջանիբեկի | |
| 12 | Վարդանյան | Էդվարդ | Հրաչյայի | |
| 13 | Սարգսյան | Վարդուհի | Ռուբիկի | |
| 14 | Վանյան | Նաիրա | Մարտիկի | |
| 15 | Նազարյան | Մելիք | Դիմիտրիի | |
| 16 | Մելքոնյան | Հայկ | Ներսեսի | |
| 17 | Թադևոսյան | Արման | Աշոտի | |
| 18 | Գասպարյան | Արամ | Վլադիմիրի | |
| 19 | Ասատրյան | Անուշ | Ռոլիկի | |
| 20 | Բաբայան | Գևորգ | Միշայի | |
| 21 | Խաչատրյան | Լուսինե | Գառնիկի | |
| 22 | Ոսկանյան | Էլմիրա | Համլետի | |
| 23 | Բադալյան | Կարապետ | Նամեստի | |
| 24 | Մեսրոպյան | Կարապետ | Բագրատի | |
| 25 | Թովմասյան | Կարինե | Գևորգի | |
| 26 | Անդրեասյան | Արտակ | Մեհրաբի | |
| 27 | Ահարոնյան | Գայանե | Գեղամի | |